# ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոնվենցիան հանդիսանում է միջազգային իրավաբանական փաստաթուղթ, որով ճանաչվում են 0-18 տարեկան երեխաների բոլոր մարդու իրավունքները:
Կոնվենցիան ընդունվել է 1989 թվականի նոյեմբերի 20-ին:
Մեր երկիրը միացել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային 1992 թվականի հունիսի 12-ին: Դա նշանակում է, որ մեր պետությունը պետք է հետևի սույն կոնվենցիայի բոլոր դրույթներին:

## Հոդված 1 / Երեխայի սահմանում

18 տարին չլրացած ցանկացած անձ՝ իր երկրի օրենքին համապատասխան, համարվում է երեխա և օժտված է սույն կոնվենցիայում զետեղված բոլոր իրավունքներով:

## Հոդված 2 / Խտրականության կանխարգելում

Յուրաքանչյուր երեխա՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, գույքային վիճակից և սոցիալական ծագումից, օժտված է սույն կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքներով: Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության:

## Հոդված 3 / Երեխայի շահերի լավագույն ապահովում

Որոշումներ կայացնելիս պետությունը պետք է լավագույն կերպով ապահովի երեխայի շահերը և երեխաներին հատկացնի հատուկ պաշտպանություն և հոգատարություն:

## Հոդված 4 / Իրավունքների իրացում

Պետությունը պետք է անի հնարավոր ամենը սույն դաշնագրով ճանաչված բոլոր երեխայի իրավունքներն իրացնելու համար:

## Հոդված 5 / Երեխայի դաստիարակությունն ընտանիքում և երեխայի ունակությունների զարգացում

Պետությունը պետք է հարգի ծնողների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը երեխայի դաստիարակման հարցում՝ հաշվի առնելով նրա զարգացումը:

## Հոդված 6 / Կյանքի, գոյատևման և զարգացման իրավունք

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք, և պետությունը պարտավոր է ապահովել երեխայի գոյատևումն ու առողջ զարգացումը՝ պահպանելով նրա հոգեկան, էմոցիոնալ, սոցիալական և մշակութային մակարդակը:

## Հոդված 7 / Անուն և քաղաքացիություն

Յուրաքանչյուր երեխա ծնվելուց ունի անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև՝ իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքին ապավինելու իրավունք:

## Հոդված 8 / Ինքնության պահպանում

Պետությունը պետք է հարգի երեխայի՝ իր ինքնությունը, ներառյալ անունը, քաղաքացիությունը և ընտանեկան կապերը պահպանելու իրավունքը և օգնի նրան դրանցից զրկվելու դեպքում:

## Հոդված 9 / Բաժանում ծնողներից

Երեխան չպետք է բաժանվի ծնողներից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է իր իսկ շահերից ելնելով: Օրինակ՝ երբ ծնողները հոգ չեն տանում երեխայի մասին կամ վարվում են նրա հետ դաժանորեն: Եթե երեխան բաժանվում է ծնողներից մեկից կամ երկուսից, նա իրավունք ունի պարբերաբար հանդիպել նրանց հետ (բացի այն դեպքերից, երբ դա հակասում է երեխայի շահերին): Եթե պետության որոշման արդյունքում երեխան բաժանվում է ծնողներից մեկից կամ երկուսից, ապա պետությունը պարտավոր է տրամադրել նրան բոլոր անհրաժեշտ տեղեկություններն իր ծնողների գտնվելու վայրի մասին (բացի այն դեպքերից, երբ դա կարող է երեխային վնաս հասցնել):

## Հոդված 10 / Ընտանիքի վերամիավորում

Եթե երեխան և նրա ծնողներն ապրում են տարբեր երկրներում, ապա նրանք պետք է հնարավորություն ունենան հատելու այդ երկրների սահմանները և մուտք գործել սեփական երկիր՝ անձնական հարաբերությունները պահպանելու նպատակով:

## Հոդված 11 / Ապօրինի տեղափոխումներ և վերադարձ

Պետությունը պետք է կանխի երկրից երեխաների ապօրինի դուրս բերումը:

## Հոդված 12 / Երեխայի հայացքներ

Երեխան իր տարիքին և հասունությանը համապատասխան իրավունք ունի ազատորեն արտահայտել իր հայացքներն իրեն վերաբերող բոլոր հարցերով: Այս նպատակով նա կարող է ունկնդրվել ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ:

## Հոդված 13 / Կարծիք արտահայտելու ազատություն

Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը, որոնել, ստանալ և հաղորդել ցանկացած տեսակի տեղեկատվություն, եթե դա չի վնասում այլ անձանց, չի խախտում պետական անվտանգությունը և հասարակական կարգը:

## Հոդված 14 / Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Պետությունը պետք է հարգի երեխայի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Երեխայի ծնողները կամ խնամակալները պետք է բացատրեն նրան այդ իրավունքը:

## Հոդված 15 / Միավորումների ազատություն

Երեխաներն իրավունք ունեն հանդիպել և միավորվել խմբերում, եթե դա չի վնասում այլ անձանց և չի խախտում հասարակական անվտանգությունն ու կարգը:

## Հոդված 16 / Անձնական կյանքի իրավունքի պաշտպանություն

Յուրաքանչյուր երեխա անձնական կյանքի իրավունք ունի: Ոչ ոք իրավունք չունի վնասել նրա հեղինակությանը և առանց թույլտվության մուտք գործել նրա տուն ու կարդալ նրա նամակները: Երեխան իր պատվի և հեղինակության հանդեպ ոտնձգություններից պաշտպանության իրավունք ունի:

## Հոդված 17 / Համապատասխան տեղեկատվության մատչելիության

Յուրաքանչյուր երեխա տեղեկատվության մատչելիության իրավունք ունի: Պետությունը պետք է խրախուսի զանգվածային լրատվամիջոցներին տարածելու երեխաների հոգևոր և մշակութային զարգացմանը նպաստող նյութեր և արգելի երեխային վնաս պատճառող տեղեկատվությունը:

## Հոդված 18 / Ծնողների պատասխանատվություն

Ծնողները հավասար պատասխանատվություն են կրում երեխայի դաստիարակման և զարգացման համար: Պետությունը պետք է ծնողներին անհրաժեշտ օգնություն տրամադրի երեխաների դաստիարակման և զարգացման գործում, ինչպես նաև պետք է ապահովի մանկական հաստատությունների ցանցի զարգացումը:

## Հոդված 19 / Պաշտպանություն չարաշահումներից և անփույթ վերաբերմունքից

Պետությունը պետք է պաշտպանի երեխային բռնության բոլոր ձևերից, ծնողների կողմից հոգատարության բացակայությունից և վատ վերաբերմունքից, ինչպես նաև պետք է օգնի մեծահասակների կողմից դաժան վերաբերմունքի ենթարկված երեխային:

## Հոդված 20 / Ընտանիքից զուրկ երեխայի պաշտպանություն

Եթե երեխան զրկվում է ընտանիքից, ապա նա իրավունք ունի ապավինելու պետության կողմից հատուկ պաշտպանության ու օգնության: Պետությունը կարող է երեխային դաստիարակման հանձնել այնպիսի մարդկանց, ովքեր հարգում են նրա մայրենի լեզուն, կրոնը և մշակույթը:

## Հոդված 21 / Որդեգրում

Պետությունը պետք է հետևի, որպեսզի երեխայի որդեգրման ժամանակ պահպանվեն նրա լավագույն շահերը և ապահովվեն նրա օրինական իրավունքների երաշխիքները: Ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս երեխայի որդեգրման դեպքում պետք է կիրառվեն միևնույն կանոնները, երաշխիքներն ու չափանիշները:

## Հոդված 22 / Փախստական երեխաներ

Պետությունը պետք է հատուկ պաշտպանություն ապահովի փախստական երեխաների համար, նրանց օգնություն տրամադրի տեղեկատվություն ստանալու գործում և նպաստի ընտանիքի հետ նրանց վերամիավորմանը:

## Հոդված 23 / Հաշմանդամ երեխաներ

Մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող յուրաքանչյուր երեխա հատուկ հոգատարության և արժանավայել կյանքի իրավունք ունի: Պետությունը պետք է նման երեխային սովորելու, բուժվելու, աշխատանքային գործունեության պատրաստվելու, հանգստանալու և առավել ինքնուրույն լինելու, այն է՝ լիարժեք կյանքով ապրելու հնարավորություն ընձեռի:

## Հոդված 24 / Առողջություն և առողջապահություն

Յուրաքանչյուր երեխա ունի իր առողջության պաշտպանության իրավունք, այն է՝ բժշկական օգնություն, մաքուր խմելու ջուր և լիարժեք սնունդ ստանալու իրավունք: Պետությունները պետք է ապահովեն մանկական մահացության իջեցումը և անցկացնեն տեղեկատվական արշավներ՝ առողջության մասին գիտելիքները տարածելու նպատակով:

## Հոդված 25 / Պարբերական գնահատում խնամակալության ընթացքում

Պետությունը պետք է պարբերաբար ստուգի խնամակալության տակ գտնվող երեխայի կենսապայմանները:

## Հոդված 26 / Սոցիալական ապահովություն

Յուրաքանչյուր երեխա ունի հանրային բարիքներից, այդ թվում նաև սոցիալական ապահովագրությունից օգտվելու իրավունք:

## Հոդված 27 / Կենսամակարդակ

Յուրաքանչյուր երեխա ունի իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք: Պետությունը պետք է օգնի այն ծնողներին, որոնք չեն կարող իրենց երեխաների համար ապահովել անհրաժեշտ կենսապայմաններ:

## Հոդված 28 / Կրթություն

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր և անվճար, իսկ միջնակարգ և բարձրագույն կրթությունը՝ մատչելի բոլոր երեխաների համար: Դպրոցներում պետք է պահպանվեն երեխայի իրավունքները, և հարգանք ցուցաբերվի նրա մարդկային արժանապատվության նկատմամբ: Պետությունը պետք է հետևի, որպեսզի երեխաները պարբերաբար հաճախեն դպրոց:

## Հոդված 29 / Կրթության նպատակներ

Կրթական հաստատությունները պետք է զարգացնեն երեխայի անհատականությունը, նրա տաղանդները, մտավոր և ֆիզիկական ունակությունները, ինչպես նաև դաստիարակեն նրան փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, մշակութային ավանդույթների և ծնողների հանդեպ հարգանքի ոգով:

## Հոդված 30 / Փոքրամասնություններին և բնիկ ազգաբնակչությանը պատկանող երեխաներ

Եթե երեխան պատկանում է էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնության, ապա նա իրավունք ունի խոսել մայրենի լեզվով, պահպանել սեփական սովորույթները և դավանել իր կրոնը:

## Հոդված 31 / Հանգիստ, ժամանց և մշակութային կյանք

Յուրաքանչյուր երեխա հանգստի ու խաղի, ինչպես նաև մշակութային և ստեղծագործական կյանքին մասնակցելու իրավունք ունի:

## Հոդված 32 / Մանկական աշխատանք

Պետությունը պետք է պաշտպանի երեխային վտանգավոր, վնասակար և նրա ուժից վեր աշխատանքից: Աշխատանքը չպետք է խանգարի երեխայի հոգևոր և մտավոր զարգացմանը:

## Հոդված 33 / Թմրամիջոցների ապօրինի գործածում

Պետությունը պետք է անի հնարավոր ամենը երեխաներին թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի գործածումից զերծ պահելու համար և պետք է կանխի երեխաների ներգրավումը թմրամիջոցների արտադրության և առևտրի մեջ:

## Հոդված 34 / Սեռական շահագործում

Պետությունը պետք է պաշտպանի երեխաներին սեռական բռնության ցանկացած ձևից:

## Հոդված 35 / Վաճառք, առուվաճառք և առևանգում

Պետությունը պետք է ամբողջ ուժերով պայքարի երեխաների վաճառքի, առուվաճառքի և առևանգման դեմ:

## Հոդված 36 / Շահագործման այլ ձևեր

Պետությունը պետք է երեխային պաշտպանի ցանկացած գործողություններից, որոնք կարող են նրան վնաս պատճառել:

## Հոդված 37 / Խոշտանգումներ և ազատազրկում

Պետությունն ապահովում է, որպեսզի ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների, դաժան վերաբերմունքի, ապօրինի ձերբակալության և ազատազրկման: Յուրաքանչյուր ազատազրկված երեխա իրավունք ունի կապ պահպանել իր ընտանիքի հետ, ստանալ իրավաբանական աջակցություն և պաշտպանություն հայցել դատարանում:

## Հոդված 38 / Զինված հակամարտություններ

Պետությունը չպետք է թույլ տա տասնհինգ տարին չլրացած երեխաներին բանակ զորակոչվել կամ ուղղակիորեն մասնակցել ռազմական գործողություններին: Զինված հակամարտությունների գոտիներում գտնվող երեխաները պետք է ստանան հատուկ աջակցություն և խնամք:

## Հոդված 39 / Վերականգնողական խնամք

Եթե երեխան դաժան վերաբերմունքի, ընդհարման, խոշտանգումների, անուշադրության կամ շահագործման զոհ է դարձել, ապա պետությունը պետք է ամեն բան անի նրա առողջությունը վերականգնելու և նրան սեփական արժանապատվության զգացումը վերադարձնելու համար:

## Հոդված 40 / Անչափահաս իրավազանցների հանդեպ արդարադատության իրականացում

Օրենքի խախտման համար մեղադրվող ցանկացած երեխա հիմնական երաշխիքների, իրավական և այլ օգնության իրավունք ունի:

## Հոդված 41 / Գերագույն չափանիշների կիրառում

Եթե որևէ առանձին պետության օրենսդրությունը երեխայի իրավունքները պաշտպանում է ավելի լավ, քան սույն կոնվենցիան, ապա հարկ է կիրառել այդ երկրի օրենքները:

## Հոդված 42 / Պահպանում և ուժի մեջ մտնելը

Պետությունը պարտավոր է կոնվենցիայի վերաբերյալ տեղեկությունները տարածել մեծահասակների և երեխաների շրջանում:

**43-ից 54 հոդվածները** վերաբերում են նրան, թե ինչպես մեծահասակները և պետությունները պետք է ապահովեն երեխաների բոլոր իրավունքները:



Սույն գրքույկը հրատարակվել է «Տարածաշրջանային նախաձեռնություն հանուն երեխաների մասնակցության» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպությունը՝ «Ապագան քոնն է» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը, համաֆինանսավորում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը՝ Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության դրամաշնորհային ծրագրի միջոցով:

Սույն հրատարակությունում արտահայտված տեսակետները կարող են չարտացոլել Եվրոպական միության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության տեսակետները:

Գրքույկի տեքստը կազմվել է ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համանման հրատարակության:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Save the Children

USAID FROM THE AMERICAN PEOPLE

ԱՊԱԳԱՆ ՔՈՆՆ Է ՀԱՅԱՍՏԱՆ Հասարակական կազմակերպություն

COUNTERPART INTERNATIONAL